

ման եւ համադրման առաւել ակնյայտ փորձերը, նաեւ՝ առաւել մեծ սխալներով: Այդ սխալներից աւելի ակնառու են, օրինակ, Զենոք Գլակի երկի անուանումն *Ասորոնց պատմութիւն* ներկայացնելը (իրականում դա ամենայն հաւանականութեամբ Զենոքի մատնանշած աղբիւրներից մէկի՝ վերականգնուող «Գիր զԱրշակունի եւ զքաջ թագաւորաց տանս Հայոց» վերնագրով երկի միւս անուանումն է), *Պարսից պատմութիւն* կիսավիպական ժողովածոյի (իբրեւ թէ Ուռհայում յայտնաբերած, սակայն «ի նոյն Իննակնեան վանս ... գրած») տուեալները Գլակավանքի վանահայրերի *գաւազանագրքի* (գլուխ Ե) հետ համաձայնեցնելիս առաջացած անհամապատասխանութիւնները, եւ այլն:

Ընդհանրապէս, քննական նոր բնագրի հրատարակութեան առիթով նշելի է, ցաւօք, որ ժամանակին երկի թուագրումը մինչեւ Թ-Ժ դարեր հասցնող հետազոտողների եւ նրանց հետետորդների գերքննադատական մօտեցման արդիւնքում (վերջին անգամ Լ. Աւդոյեանի անգլերէն թարգմանութեան մէջ) Յովհանի աղբիւրների հիմնաւոր ուսումնասիրութիւնը ինչ-որ չափով կանգ է առել: Մեծ ծաւալով օգտագործելով *Պատմութիւն Տարօնոյ*-ի բազմատեսակ տեղեկութիւնները, բանասերներից շատերը, միաժամանակ, նրա աղբիւրներից եւ առկայ ձեռագրերից եկող հակասութիւնները թերեւաբար վերագրում են Մամիկոնեան պատմիչին՝ հաշուի չառնելով նրա յիշատակարանի անմիջականութեամբ տոգորուած խոստովանութիւնները եւ յորդորները: Նշենք, որ հակասութիւնների մի մասը լուծում է ստանում նոր քննական բնագրում ի յայտ եկած հաւաստի ընթերցումների շնորհիւ: Աղբիւրագետի խնդիրը համարելով հեղինակի սխալների տրամաբանութիւնը գտնելը, այլ ոչ թէ նրա երկը պարզապէս ուշ դարաշրջան տեղափոխելը (ճշմարիտ աղբիւրագիտութեան հետ ոչ մի կապ չունեցող այն մտայնութեամբ, թէ ինչքան աւելի վաղ է հեղինակը, այնքան աւելի հաւաստի պէտք է լինեն նրա շարադրած նիւթերը)՝ մեր բնագրի տողատակի ծանօթագրութիւնների սուղ հնարաւորութիւնների շրջանակում փորձել ենք նաեւ ներկայացնել այդպիսի մեկնաբանութիւնների մի մասը:

Իսկ երկի առանձին մասերի աղբիւրների համար գնահատման չափանիշերի փոփոխութիւնը դէպի վանական բանահիւսութեան եւ ուշ Մասանեան արանդոյթին համահունչ, գրեթէ աշխարհիկ վիպական յուշարձաններ, ամբողջապէս հնարաւորութիւն է տալիս ըստ արժանւոյն գնահատել *Պատմութիւն Տարօնոյ*-ն՝ իբրեւ վաղ միջնադարեան գրականութեան աչքի ընկնող կոթողներից մէկը: Միաժամանակ, կարելոք է նշել, որ երկի՝ տարբեր սկզբնաղբիւրների հանգող մասերը լեզուաճական մեծ նմանութիւն են դրսեւորում, ուստի դրանք չի կարելի դիտել իբրեւ բառացի արտագրուած եւ այդպիսով անխաթար պահպանուած բնագրեր: Հետեւելով նաեւ բանաւոր արանդոյթին՝ Մամիկոնեան պատմիչն անշուշտ շատ դէպքերում հարստացրել է իր արտագրածը անձնական ներդրումով: Ի տարբերութիւն աւելի վաղ երկերի՝ նրա մօտ լաւ է պահպանուել նաեւ լեզուաճական հասարակաբանութիւնը:

Երկի քննական բնագիրը *Մատենագիրք Հայոց*-ի համար պատրաստուել է նախկին հրատարակութիւններում օգտագործուած եւ նոր գրչագրերի վերլուծութեան արդիւնքում: Մաշտոցի անուան Մատենադարանում պահուող բոլոր, ինչպէս նաեւ դրսի գրչագրերի մեծ մասի հրատարակուած կտորների առանձնայատկութիւնների քննութեամբ կազմուել է ձեռագրերի ճիշտագրութիւնը, որից պարզ է դառնում,